

յրուբենից» սկսողների հետաքրքրութեան «հասարակ ժողովըրդի» պարզամտութեան առարկայ:

Այսքան էլ ողորմելի լառաջադիմութիւն:

Այսքան էլ բնորոշ գնահատութիւն իրենց գործունէութեան ու արժանիքի,

Սև միթէ: Կալ տեսակ հետեանքներ կարող էին առաջացնել դրանց անվերջ հայհուանքներ, դրանց գինովացած ինքնապաշտութիւնը, դրանց բերան սերտած «Լալն համամարդկային» զաղափարների անուան տակ գործ դրած ամենանեղ սիրա եղբայրատեցութիւնները, ծայրագոյն աններողամիտ վերաբերմունքներն ու հալածանքները զէպլի իրենց հակաուկորդները, զէպլի նրանց առ հասարակ, որոնք իրենց փարախից չեն, որոնք իրենց նման մտածող չեն, իրենց թուժակով ածող ու պարողներից չեն:

Այն, ցաւալի, շատ ցաւալի, որ այսօր զարդացած հալ դասակարգը երես է դարձրել մեր մամուլից (այս հարցին կը դառնանք մի ակ անգամ), ցաւալի է, որ այսօր քիչ շատ կամք, խելք, դիրք ու հասկացողութիւն ունեցող հայերի աչքում կորցրել է հալ մամուլը իր նշանակութիւնը ու ակելի ցաւալին այն է, որ այսօրուակ «այլուբենից» սկսողներն էլ վաղը մի փոքր որ առաջանան—զարգանան, պիտի ակելի զգուանքով շուռ տան երեսները իրենց «փոքրիկութիւնը» շահագործող առաջադիմականներից:

Այս այսպէս լինելով տուժողը-կորչողը պիտի լինի հայութիւն, աշխարհօրէն չահուող նրանք, որոնք փոքրիկներին գալթակղեցնում են, որոնք իրենք իրենց փառաբանում են, որոնք եւրոպական քաղաքակրթութիւն չյս գիտութիւն ասելով հասկանում են անսանձութիւն և տնական ինքնուրուծիւր, մամուլ ասելով հասկանում են առատ կաթ տուող կով, ընթերցող ասելով հասկանում են իրենց կաթը սպառող մանուկ: Այս թշուառ առաջադիմութիւնը տեսնելով, մնում է մեզ անմահ Նազարեանցի նման ասել:

«Ազգերնիս կը լառաջադիմ է կոր»:

ԽԱԿՈՒՆԻ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼԵՋԱՑԻՆԵՐԸ

Անցեալները «Նոր-Գարը» հաղորդել էր, թէ ամերիկացի մի խումբ լեհացիներ ցանկալով առանձին, ազգալին անկախ

եկեղեցի հիմնել, զիմել են Ամերիկայի հայոց եպիսկոպոսին և խնդրել, որ իրենց համար քահանաներ ձեռնադրէ և միջնորդէ Ազգիս Վեհախառն Հայրապետի առաջ, որպէս զի նրանց համար մի եպիսկոպոս ձեռնադրէ:

«Առումար»-ի անցեալ համարում տպուած էր այդ գրութեան թարգմանութիւնը, որով լեհացիները զիմել էին Սարաճեան սրբադանին: Անշուշտ շատ հետաքրքրական երևալի է լեհացիների այդ վարմունքը պատմական էւոլյուցիայի տեսակէտից և խրատական մեղ հայոցս համար—մինչ մենք ոչինչ զինչ չենք տալիս մեր դարերով սրբադորձուած ազգային ժողովրդական եկեղեցուն, ուրիշ ազգեր (մենակ լեհացիները չեն այդ անողը) ամեն ձիւթ թափում են մի հնար գտնելու որ իրենց համար սեփականազգային եկեղեցի ստեղծեն, այնպէս, ինչպէս Անգլիան ստեղծեց (անգլիական) ինչպէս Ֆրանսիան քանիցս փորձեց ստեղծել (գալիքան) եկեղեցին... Ինքն ըստ ինքեան արդէն մեր ինքնասիրութեան կողմից էլ հետաքրքրութիւն է ներկայացնում այդ խնդրի ապագայ ընթացքը: Իսկ մինչ այդ՝ աւելորդ չէ մի քանի տեղեկութիւններ տալ Ամերիկայի լեհացիների մասին:

Լեհացիները Ամերիկայ սկսել են զաղթել սկսած 1830 թուականից, բայց այդ գաղթականութիւնը մանաւանդ առանձին ուժ ստացաւ 1850 թ. լետույ, երբ զանազան նաւագնացութեան ընկերութիւններ Ամերիկայի Տեխաս և ուրիշ նահանգների կալուածատէրերից վարձատրութիւն ստանալով առանձին հրաւերներ, ունկլամներ սկսան տարածել դատարկ տեղերի մասին, որոնք որպէս թէ համարեա թէ ձրիապէս բաժանուած են ուղղոյներին: Ամերիկայում շատ ազատ հողեր կալին, բայց բանուորներ չկալին հողը մշակելու համար: Ռեկլամների նպատակն էր մշակներ գրաւել, Եւրոպայի ամեն կողմից սկսան գունդ-գունդ գիւղացիներ, որոնց մի մասը դնում էր առ միշտ նոր հայրենիքում ընակութիւն հաստատելու նպատակով, իսկ միւս մասը՝ վերատին իւր հին հայրենիքը վերադառնալու շուտով: Ներկայումս արդէն զրանց թիւը Ամերիկայում հասնում է մօտ $1\frac{1}{2}$ միլիոնի:

Բնականաբար Ամերիկայում լեհացիները ազատ էին ամեն տեսակ գործի էլ կաշնելու. բայց մինչև օրս էլ նրանք զլիսաւորապէս ամենահասարակ գործերով են զբաղուած և հազիւ է պատահում, որ նրանց միջից փոքր ի շատէ չասենք բարձր, նոյն իսկ միջին կարգի պաշտօնի հասնողներ լինին թէ արհեստների և թէ՛ առևտուրի մէջ: Միևնոյն կերպով էլ նրանք համարեա թէ ոչ մի քաղաքական դեր չեն խաղում երկրի մէջ, ոչ մի նշանակութիւն չունին նաև քաղաքային գործերի մէջ, թէպէտ և նրանց թիւը, օրինակ, Չիկագօ քաղաքում հասնում է 50,000-ի, Բուֆֆալօում և Նիւ-Էորկում—40-ական հազարի և այլն: Եւ այդ բանը բացատրուած է նրանով, որ նրանց մէջ ոչ մի կապ չկալ, և եթէ դեռ միմեանց

հետ մի որ և իցէ լարարերութիւն պահպանում են, այդ էլ կրօնի շնորհիւ է միայն: Ամերիկայում նրանք 300-ից անելի եկեղեցիներ ունին և ամեն տարի էլ նորերն են հասուցանում. ուր որ մի երկու հարիւր լեհացի բնակութիւն հաստատեց, անշուշտ այն տեղ էլ եկեղեցի կկառուցուի՝ կողքին էլ ուսումնարան, բայց այդ ուսումնարանները շատ սահմանափակ, համարեա զուտ կրօնական ծրագիր ունին, և միայն Չիկագօի կոլլեգիան և Գեկտրուալի դպրանոցն է, որ միջնակարգ ուսումնարանները ծրագիր ունին:

Իսկ նրանց հոգևոր գործերի մասին զաղափար կարելի է կազմել Barszezewski-ի «Polacy w Americ» գրքովից, որի մէջ տեղեկութիւններ տալով լեհացոց գաղութների մասին Ամերիկայում, Նիարագրում է նաև նրանց հողերականների դրութիւնը:

Ամերիկայի լեհական հողերականութիւնը բոլորովին լուր կոչման բարձրութեան վրայ կանգնած չէ և լուր հոտի վրայ էլ ոչ մի աղղեցութիւն չունի, որովհետև նրա կազմութեան մէջ մտնում են այնպիսի անձինք, որոնց Եւրոպայի եպիսկոպոսներն արձակած են իրենց պաշտօնից ¹⁾: Իսկ Ամերիկայի կաթոլիկ եպիսկոպոսները, որ զլիսաւորապէս դերմանացի կամ լուչանդացի են լինում, չեն հասկանում լեհական հօտի հողեր կարիքները: Քահանաների մէջ շարունակ վէճեր, զանդատներ են տեղի ունենում հարուստ ծուխ ձեռք բերելու համար, և այդ քանը վատ ներգործութիւն ունի ծիսականները վրայ: Երբեմն քահանայք փորձեր են անում եպիսկոպոսի իշխանութիւնից դուրս գալով անկախ իշխանութիւն հաստատել: Պէտք է նկատել, որ Ամերիկայի Միացեալ Նահանգներում եկեղեցին սեփականութիւն է համարում այն եպիսկոպոսի, որի իշխանութեան տակ որ գտնուում է, այսպիսով եկեղեցական կաշքերը իսկապէս կազմում են եպիսկոպոսի սեփականութիւնը, իսկ քահանայք բացարձակապէս կախումն ունին եպիսկոպոսից:

Երբեմն պատահում է, որ ժողովրդի մի մասը դժգոհ լինելով եպիսկոպոսի մի որ և իցէ կարգադրութիւնից, բաժանուում է և իրեն համար ջոկ եկեղեցի շինում և եպիսկոպոսի իշխանութիւնից բոլորովին անկախ դառնում. միևնույն կերպով վարում են նաև քահանայք: Նրանցից մէկն, օրինակ, հարկ Կոլլովսիին, մինչև անգամ իրեն Չիկագօի անկախ եպիսկոպոս հրատարակեց՝ նախապէս Ձուիցերիայի հին կաթոլիկ եկեղեցու մի եպիսկոպոսից ձեռնադրուելուց յետոյ:

¹⁾ Իստա մեծ գղութեամբ պէտք է վերաբերուել դէպի այդ դիտողութիւնը, որ անկասկած կաթոլիկ հողու արդիւնք է, մանաւանդ որ չէ լատնուած, թէ ինչ պատճառով են այդ քահանայք իրենց պաշտօնից արձակուած: Երգեօք այդ պատճառը հէնց այն բողոքող հողին չէ, որը նրանց ստիպում է գնալ աղատ երկիր և աղատ եկեղեցի հիմնել: Մ. Վ.

Երկրորդ անկախ կախկոտութիւն հիմնողը եղել է Կամի-
նակին Բուֆալտում:

Արդէն սոյն համառոտ տեղեկութիւններէից էլ երևում է,
որ Ամերիկայում ինչպէս նաև ամեն մի լուսաւորեալ և ազատ
երկրում կաթոլիկ եկեղեցին լուծուած և կաթոլիկ ժողովուրդը,
չհանդուրժելով այդ եկեղեցու բռնապետական ոգուն, որը ա-
մեն մի հաւատացեալի հոգին աշխատում է սեղմել չափազանց
սահմանափակ շրջանակի մէջ, աշխատում է դուրս դալ ճնշման
տակից և փոքր ինչ ազատ շունչ քաշել:

Սակայն Սառաձեան Սրբազանին դիմող կաթոլիկները
ինչպէս երևում է, աւելի ընդարձակ նպատակ և գաղափար ու-
նին, քան լոկ Հոմոի բռնակալութիւնից աղատուելը. նրանք
ուզում են հիմք դնել լեհական աղգալին ժողովրդական եկե-
ղեցու...: Բայց աջողութիւն կունենան թէ ոչ — այդ ապագալի
գործ է իհարկէ. լամենայն դէպս չենք կարող չցանկանալ ի
սրտէ աջողութիւն այդ ինքնուրոյնութեան գաղափարի զի-
նուորներին:

Աւելացնենք այս, որ լեհացիներն Ամերիկայում ունեն
բաւական թուով պարբերական թերթեր (40-ից աւելի), որոնց
մի նշանաւոր մասը (18 հատ) հրատարակուած է Չիկագոում:
Առաջին թերթը հրատարակուել է Նիւ-Եորկում, 1863 թուին:
Նրանք ունին նաև փոխադարձ օգնութեան մարմնամարդա-
կան, երաժշտական և այլ ընկերութիւններ:

ՀԱՅՈՑ ՂԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՓՐԱՆՄԵՐԷՆ ԹԱՐԿՄԱՆՈՒԹԻՒՆ

Մեր աշխատակից պ. Յարոն ձեռնարկել է Փրանսերէն թարգ-
մանելու, արձակ ձևով, մեր Հայաստանեայց ս. եկեղեցու մի
քանի ընտիր շարկանները, որ մտադիր է ժամանակին լոյս հա-
նել առանձին հրատարակութեամբ՝ Փրանսիացի ընթերցողին
անհրաժեշտ ծանօթութիւններով: Ասպիսի աշխատութեանց հե-
տաքրքիր Վլումալի ընթերցողների համար առաջ ենք բերում
այստեղ հետեւեալ երեք տունը իբրև նմուշ:

Շարական սրբոց Վարդանանց

Նորահրաշ պսակաւոր և զօրա-
զլուիս առաքինեաց. վաղեցար
զինու հոգ ուն արիարար ընդդէմ
մահու. Վարդան քաջ նահատակ,
որ վանեցեր զթշնամին. վարդա-
զոն արեամբդ քով պսակեցեր
զեկեղեցի:

Nouveau miraculeusement cou-
ronné, chef des vertueux com-
battans, tu t'es vaillamment ar-
mé des armes de l'Esprit contre
la Mort, o toi, Vardan intrépi-
de martyr, tu as mis en fuite
l'ennemi, et, de ton sang, de cou-
leur rose, tu as couronné l'Eglise!